ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Փոխվարչապետի 2021 թվականի նոյեմբերի 4-ի N894-Ա որոշմամբ ստեղծված «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստի

ք. Երևան 12.04.2022թ.	ժամը՝ 16:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ն. Զաստուխովա	արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության պետ
Տ. Մելքոնյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության պետ
Լ. Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ
Ն. Բուդոյան	շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ
Լ. Սիրականյան	էկոնոմիկայի նախարարության հանրային ներդրումների վարչության պետի պաշտոնակատար
Վ. Քեշիշյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վերականգնվող էներգետիկայի բաժնի պետ
Մ. Ավետիսյան	կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի երկրատարածական տվյալների կառավարման բաժնի պետ
Ն. Հակոբյան	շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ռ. Գրիգորյան	առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»

	ՊՈԱԿ-ի շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ
Ա. Սաղաթելյան	էկոնոմիկայի նախարարության հանրային ներդրումների վարչության գլխավոր մասնագետ
Լ. Սարգսյան	շրջակա միջավայրի նախարարության մթնոլորտային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Թ. Աթալյան	արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տարերային աղետների բաժնի մասնագետ
Ա. Սահակյան	աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Կոշեցյան	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսաբյուջետային բաժնի ավագ մասնագետ
Տ. Սողոմոնյան	բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի հետազոտության բաժնի ավագ մասնագետ
Ա. Գևորգյան	շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կլիմայական ծառայության պետ
Մ. Գասպարյան	շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման» ՊՀ-ի տնօրենի օգնական
Դ. Հարությունյան	ՄԱԶԾ ծրագրերի համակարգող
Գ. Հովհաննիսյան	ՄԱԶԾ հարմարվողականության ազգային ծրագրի համակարգող
Հ. Հակոբյան	ՄԱԶԾ փորձագետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- ԱՍԳ գործընկերության պլանի և գործընկերության հետ համագործակցության հնարավորությունների ներկայացում
- Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի ներկայացում
- Հարմարվողականության ազգային ծրագրից բխող ոլորտային հարմարվողականության ծրագրերի ներկայացում

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝

Ն. Բուդոյանը ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց օրակարգում ներառված հարցերը: Կարևորեց էներգետիկայի ոլորտի դերը կլիմայական քաղաքականության մշակման մեջ, քանի որ ջերմոցային գազերի արտանետումների մոտ 70%-ը այս ոլորտից է: Հավելեց, նաև, որ էներգետիկայի ոլորտը թիրախավորվելու է Հայաստանի երկարաժամկետ, ցածր արտանետումներով ռազմավարության մշակման ժամանակ, ինչը շրջակա միջավայրի նախարարությունը պատրաստվում է Կառավարության հաստատմանը ներկայացնել այս տարի:

Հ. Հակոբյանը ներկայացրեց ԱՍԳ գործընկերության պլանը, ինչի նպատակն է աջակցել Հայաստանում ԱՍԳ-ի իրականացման համակարգումը: Այն հանդիսանում է պլանավորման և մոնիթորինգի գործիք, ինչը նախանշում է ԱՍԳ-ի հիմնական դերակատարներին, ներառյալ նախարարություններ, գործընկերներ, միջազգային դոնորներ և շահագրգիռ այլ կողմեր՝ միասին աշխատելու ընդհանուր կլիմական նպատակների համար, որոնք համահարթեցված են Կառավարության առաջնահերթություններին և երկրի կարիքներին:

Թ. Աթալյանը հետաքրքրվեց արդյոք հնարավոր է ստեղծել կլիմայական ծրագրի նախագծերի վերաբերյալ առցանց հարթակ:

Դ. Հարությունյանը պատասխանեց, որ այդպիսի հարթակի նախագիծ արդեն պատրաստ է:

Տ. Մելքոնյանը ներկայացրեց «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության 2022-2030 թվականների ազգային ծրագրի», ինչը նպատակաուղված է առաջիկա 10 տարիների ընթացքում Հայաստանի տնտեսության էներգաարդյունավետության ու էներգախնայողության բարելավմանը, ինչպես նաև ընդլայնել վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը՝ որպես էներգետիկ անվտանգության ու հուսալիության բարձրացման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման միջոց:

Ա. Գևորգյանը հետաքրքրվեց արդյո՞ք վերականգնվող էներգիայի մասնաբաժինը 15%-ի փոխարեն կարելի է ավելացնել, կամ որքա՞ն է վերականգնվող էներգետիկայի ներուժը Հայաստանում:

Տ. Մելքոնյանը պատասխանեց, որ արևային էներգիայի յուրաքանչյուր չափաքանակ որոշելիս հաշվի է առնվում էներգետիկ համակարգի կայունության և հուսալիության պահպանումը: Հաշվի առնելով էներգահամակարգի որոշակի հանգամանքներ, վերլուծություններ և հաշվարկներ, մինչև 2030 թվականը վերականգնող էներգետիկայի մասնաբաժինը սահմանվել է 15%:

Ն. Զաստուխովան հետաքրքրվեց թե արդյոք տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը համագործակցում է Երևանի քաղաքապետարանի հետ, և այն տեղեկատվությունը, ինչը վերջերս տարածվել է, թե մի քանի էլեկտրամոբիլների համար նախատեսված լիցքավորման կայաններ ապամոնտաժվել են, արդյո՞ք իրականությանը համապատասխանում է:

Տ. Մելքոնյանը պատասխանեց, որ բարձրացված հարցը տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգման ներքո չէ, յուրաքանչյուր ծրագրի մասով՝ թե մասնավոր, թե պետական, իրականացնում են այդ ծրագրերը: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը խնդիրն իրավական կարգավորումների մշակման և քաղաքականության վարման դաշտում է:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման ծրագիրը, դրանից բխող ոլորտային ռազմավարությունները, որոնք ներկայումս ընթացքի մեջ են:

Վերջինս նշեց, որ մշակվել է Կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիր Շիրակի և Տավուշի մարզերի համար, ինչպես նաև ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության, զբոսաշրջության ոլորտների համար, և աշխատանքներ են տարվում էներգետիկայի ոլորտներում ԿՓ հարմարվողականության ծրագրի նախագծի մշակման համար:

Ն.Զաստուխովան առաջարկեց աշխատանքային խմբերում ներառել նաև Երևանի քաղաքապետարանից ներկայացուցիչների:

Ն.Բուդոյանն ամփոփելով նիստը, տեղեկացրեց, որ որ 15-օրյա ժամկետում վերանայված ԱՍԳ գործընկերության պլանը կներկայացվի աշխատանքային խմբի անդամներին՝ առաջարկությունների և դիտողությունների համար: Գործընկերության պլանում առկա հաշվետվայնությանն ու ֆինանսավորմանն առնչվող բաղադրիչները կներկայացվեն նաև մշտական միջգերատեսչական մյուս երկու աշխատանքային խմբերին՝ վերջիններիս կողմից նույնպես կարծիքներ ստանալու համար: Նախանշեց խմբի գործունեության հետ կապված հետագա քայլերը՝ առաջարկելով հաջորդ նիստին քննարկել շրջակա միջավայրի համակարգման ներքո իրականացվող, ինչպես նաև Կառավարության միջոցառումների ծրագրում ընդգրկված էլեկտրոմոբիլների խթանմանն ուղղված ծրագրերը՝ հետագա աշխատանքները ճիշտ կազմակերպելու նպատակով:

Դ. Հարությունյանը առաջարկեց հաջորդ նիստին քննարկել նաև Carbon Limits ընկերության կողմից մշակված կլիմայական ծրագրերի թափանցիկ հասնաելիության նպատակով ստեղծված կլիմայի փոփոխության ծրագրերի վերաբերյալ միասնական հարթակի նախագիծը:

Առաջարկությունն ընդունվեց խմբի անդամների կողմից:

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԲՈՒԴՈՅԱՆ

Արձանագրեց՝
Ա. Ղուկասյանը